ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/12

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի կողմից 07.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.06.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

« 1. Վեճի առարկան.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովըհայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստին որոշմամբ մերժել է առաջին տեղ զբաղեցնող ճանաչված «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի հայտը: Հայտը մերժվել է որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացված պայմանագրերը ոչ նմանատիպ գնահատելու հիմնավորմամբ: «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն գտնում է, որ մերժման հիմնավորումը բացարձակ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

2. Բողոքը ներկայացրած անձի պահանջը.

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 3-րդ, 5-ից 10-րդ, 21-ից 23-րդ, 28-րդ, 40-րդ, 41-րդ, 45-ից 49-րդ, 54-րդ, 55-րդ, 60-ից 62-րդ, 76-րդ, 78-ից 80-րդ, 83-ից 89-րդ, 92-րդ, 94-րդ, 97-րդ, 99-ից 104-րդ, 108-րդ, 109-րդ, 111-ից 113-րդ, 117-րդ, 119-րդ, 127-րդ, 139-րդ, 141-ից 143-րդ, 147-րդ, 156-

րդ, 161-րդ, 177-ից 180-րդ, 182-ից 184-րդ, 187-ից 189-րդ, 191-րդ, 192-րդ, 202-ից 206-րդ, 214-ից 226-րդ չափաբաժիններով ընկերության հայտը մերժելու մասին, ինչպես նաև դրանից բխող հետագա բոլոր որոշումները՝ այլ մասնակիցներին ընտրելու վերաբերյալ: Պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունված լինելու դեպքում նաև կիրառել ժամանակավոր միջոց, կասեցնել ընթացակարգը և արգելել կնքել պայմանագիր նշված չափաբաժիններով՝ նախքան բողոքարկման գործընթացի ավարտը:

3. Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝

• 8-րդ կետի համաձայն, հրավերը՝ պայմանագիր (շրջանակային համաձայնագիր) կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններն են,

• 9-րդ կետի համաձայն, հայտը՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝

• 3-րդ կետի համաձայն՝ «Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին»,

• 5-րդ կետի համաձայն՝ «Հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները»:

«Գակ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետում նմանատիպության վերաբերյալ սահմանված է հետևյալը.

«Նմանատիպ են համարվում էլեկտրատեխնիկայի և կամ ռադիոտեխնիկայի և կամ կենցաղային սարքավորումների և կամ կապի սարքերի, **<u>և կամ սարքավորումների</u>** և կամ ռադիոկայանների և կամ վերահաղորդիչների և կամ դրանց օժանդակ մասերի և կամ մինի ԱՀԿ-ների և կամ դրանց ընդլայնման քարտերի և կամ մարտկոցների մատակարարման պայմանագրերը»:

Հրավերի 2-րդ մասի 2.2.3 կետի 2-րդ պարբերությունում սահմանված է հետևյալը.

«Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են նույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող համարվում են էլեկտրատեխնիկայի և կամ ռադիոտեխնիկայի և կամ կենցաղային սարքավորումների և կամ կապի սարքերի, **<u>և կամ</u>**

<u>սարքավորումների</u> և կամ ռադիոկայանների և կամ վերահաղորդիչների և կամ դրանց օժանդակ մասերի և կամ մինի ԱՀԿ-ների և կամ դրանց ընդլայնման քարտերի և կամ մարտկոցների մատակարարման պայմանագրերը: Հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:»:

Հրավերի նշված երկու կետերում էլ հստակ շարադրված է այն միտքը, որ **նմանատիպ են համարվում նաև սարքավորումների մատակարարման պայմանագրերը:** «և կամ» արտահայտությունները հստակ առանձնացնում են թվարկվող ապրանքախմբերը և «սարքավորումներ» խումբը, համաձայն հայերեն լեզվի կանոնների, տվյալ նախադասություններում հանդես է գալիսթվարկվածներից առանձին իմաստով: Միաժամանակ, եթե նույնիսկ սահմանված նախադասությունը տարաբնույթ մեկնաբանվի, որը սակայն այդպես չէ՝ ինչում կարելի է համոզվել նաև լեզվի պետական տեսչություն դիմելով, ապա **<u>Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում սռկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:</u>**

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն որպես նախկին ժամանակահատվածում կատարված պայմանագիր ներկայացրել է ապրանքների գնման պայմանագրեր՝ պատշաճ կատարված: Պայմանագրերի առարկա են հանդիսացել տարբեր սարքավորումներ և պահեստամասեր:

Գտնում ենք, որ ընկերության հայտի մերժելը իրավաչափ չէ:

4. Այլ անհրաժեշտ տեղեկություններ.

Ընկերության հայտը անհիմն մերժելով Պատվիրատուն հանգեցնում է պետ. բյուջեի միջոցների անհիմն գերածախսի, բացի այդ պատճառելով էական ֆինանսական վնաս «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին: Ֆինանսական վնաս է հանդիսանումբաց թողնված օգուտը, ինչպես նաև ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն մասնակցին գնումների իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի անտեղի կիրառման հետևանքները:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Ընկերության ներկայացուցիչ՝ Արտակ Ռոբերտի Սուքիասյանը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարության Նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.06.2017թ. թիվ ԴՎԱ/1848 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները՝ համակարգի միջոցով (armeps.am) ոչ ավտոմատ եղանակով ծանուցվեցին երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը հիմնավորող պայմանագրերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող (ոչ նմանատիպ): Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը 24.05.2017թ. նիստը մեկ օրով կասեցրել է և մասնակցին առաջարկել է շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պարզաբանում (կցվում է), որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ոչ հիմնավոր, ուստի «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի» հայտը գնահատող հանձնաժողովի կողմից 26.05.2017թ. մերժվել է հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը հիմնավորող պայմանագրերը (ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-14/33-2) վերաբերվում են բժշկական սարքավորումներին (մահճակալ բազմաֆունկցիոնալ, սղոց վիրահատական և այլն), մինչդեռ մրցույթը հայտարարված է կապի սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ:»:

Պատվիրատուն միաժամանակ հարկ է համարել նշել, որ կապի միջոցները և դրանց օժանդակ սարքեր, սարքավորումներն ու վերանորոգման դետալները նախատեսված են ՀՀ զինված ուժերի բոլոր ստորաբաժանումների, մասնավորապես առաջնագծի կապի ոլորտի սարքերի նորոգման և համալրման համար:

Պատվիրատուն հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում է որ բողոքաբեր կազմակերպության ներկայացված բողոքն անհիմն է:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Արմեն Ամիրյանը և Խաչատուր Երիցյանը:

4. ԳԲԽ-ԷՍ-2017/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի 07.06.2017թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի 16.06.2017թ. թիվ ԴՎԱ/1848 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.04.2017թ. ժամը 10:30-ին և 23.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստերի՝ համապատասխանաբար N 3 և N 4 արձանագրությունները, Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների ներկայացրած դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ պաշտպանության նախարարության Նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգի մի շարք չափաբաժիններին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովի 12.04.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով կայացրած որոշման համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է որպես Ընթացակարգի 3-րդ, 5-ից 10-րդ, 21-ից 23-րդ, 28-րդ, 40-րդ, 41-րդ, 45-ից 49-րդ, 54-րդ, 55-րդ, 60-ից 62-րդ, 76-րդ, 78-ից 80-րդ, 83-ից 89-րդ, 92-րդ, 94-րդ, 97-րդ, 99-ից 104-րդ, 108-րդ, 109-րդ, 111-ից 113-րդ, 117-րդ, 119-րդ, 127-րդ, 139-րդ, 141-ից 143-րդ, 147-րդ, 156-րդ, 161-րդ, 177-ից 180-րդ, 182-ից 184-րդ, 187-ից 189-րդ, 191-րդ, 192-րդ, 202-ից 206-րդ, 214-ից 226-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշում է կայացրել հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 12.05.2017թ. գրությամբ ծանուցել է Ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին և հայտնել, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները պարտավոր են նշված ծանուցումն ստանալուց հետո Հրավերով սահմանված ժամկետում և կարգով a. amiryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) Հրավերի 2-րդ մասի՝ «Հայտը պատրաստելու հրահանգի» 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 24.05.2017թ. գրությամբ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին հայտել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար Ընթացակարգին Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացվել են կամ համարժեք արտահայտությամբ, ինչը ընդունելի չէ, բացի այդ Ընկերության կողմից ներկայացված՝ մասնագիտական փորձառությունը հիմնավորող պայմանագրերը Հանձնաժողովի կողմից գնահատվել են Հրավերի պահանջներին չհամապատասխանող (ոչ նմանատիպ):

Հանձնաժողովը հայտնել է նաև, որ հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և անհրաժեշտ է նշված ծանուցումն ստանալուց հետո սահմանված կարգով (Կարգի 52-րդ կետ) մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել amiryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեով:

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն 25.05.2017թ. գրությամբ դիմել է Հանձնաժողովին՝ հայտնելով հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 24.05.2017թ. գրության, կից ներկայացնում եմ առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերի հստակեցված տարբերակը:

Ինչ վերաբերվում է «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորելու նպատակով մեր կողմից ներկայացված պայմանագրերի նմանատիպությանը, ապա հայտնեում եմ, որ համաձայն ՀՀ գնումների մասին օրենդրության պահանջների նմանատիպության պայմանը սահմանում է պատվիրատուն հրավերով:

Հրավեր 1-ին մասի 2.3 կետում նմանատիպության վերաբերյալ սահմանված է հետևյալը.

«Նմանատիպ են համարվում էլեկտրատեխնիկայի և կամ ռադիոտեխնիկայի և կամ կենցաղային սարքավորումների և կամ կապի սարքերի, և կամ սարքավորումների և կամ ռադիոկայանների և կամ վերահաղորդիչների և կամ դրանց օժանդակ մասերի և կամ մինի ԱՀԿ-ների և կամ դրանց ընդլայնման քարտերի և մարտկոցների մատակարարման պայմանագրերը:»:

Հրավերի 2-րդ մասի 2.2.3 կետի 2-րդ պարբերությունում սահմանված է հետևյալը.

«Գործարքները համարվում են համանման, եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող էլեկտրոտեխնիկայի և կամ ռադիոտեխնիկայի և կամ կենցաղային սարքավորումների և կամ կապի սարքերի և կամ սարքավորումների և կամ ռադիոկայանների և կամ վերահաղորդիչների և կամ դրանց օժանդակ մասերի և կամ մինի ԱՀԿ-ների և կամ դրանց ընդլայնման քարտերի և մարտկոցների մատակարարման պայմանագրերը: Հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:»:

Հրավերի նշված երկու կետերում էլ հստակ շարադրված է հետևյալ արտահայտությունը՝ «նմանատիպ են համարվում սարքավորումների մատակարաման պայմանագրերը»: «և կամ» բառերը հստակ առանձնացնում են ապրանքնախմբերը և «սարքավորեումներ» խումբը, համաձայն հայերեն լեզվի կանոնների, չի կապվում թվարկված մյուս ապրանքախմբերին՝ հանդես գալով որպես առանձին թվարկվող իմաստ: Միաժամանակ, եթե նույնիսկ սահմանված նախադասությունը տարաբնույթ մեկնաբանվի, որը սակայն այդպես չէ, ապա Հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ հայտը հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է: Քանի որ հրավերով որպես մասնագիտական փորձառություն է սահմանվել նաև սարքավորումների մատակարարումը և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն ունի սարքավորումների մատակարարման պատշաճ կատարված պայմանագրեր, Ընկերությունը ներկայացրել է մասնակցության հայտ դրան համապատասխան:

Ելնելով վերը շարադրվածներից, խնդրում ենք կրկին ուսումնասիրել «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով հրավերով սահմանված պահանջները և մեր ընկերության կողմից ներկայկացված փաստաթղթերի համապատասխանությունը դրանց: Միաժամանակ հայտնում ենք, որ հայտի մերժման դեպքում անհիմն կերպով կսահմանափակվի մրցակցությունը, կխախտվեն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջները, ինչպես նաև պետական բյուջեին կհասցվի ֆինանսական վնաս: Նաև, մեր ընկերությունը ստիպված կլինի բողոքարկել գնահատող հանձնաժողովի որոշումը, ինչը կհանգեցնի գնման գործընթացի կասեցման, որը ցանկալի չէ ոչ մեր ընկերությանը, ոչ էլ կարծում ենք Պատվիրատուին:»:

Հանձնաժողովը 23.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի, որը հետաձգվել է մինչև 26.05.20017թ., N 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, հետևյալը.

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակը, որոնք Հանձնաժողովի կողմից գնահատվել են Հրավերի պահանջներին բավարարող: Նմանատիպ պայմանագրերի մասով Մասնակիցը որպես շտկում ներկայացրել է պարզաբանում, որը Հանձնաժողովի կողմից գնահատվել է ոչ հիմնավոր, ուստի «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի հայտը Հանձնաժողովի կողմից 26.05.2017թ. մերժվել է հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:»:

Հանձնաժողովը 26.05.2017թ. գրությամբ «Մ. Թրեյդլայն» ՍՊԸ-ին հայտնել է, որ Ընթացակարգի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում Ընկերության կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը հիմնավորող պայմանագրերը Հանձնաժողովի կողմից գնահատվել են Հրավերի պահանջներին չհամապատասխանող (ոչ նմանատիպ) և հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է:

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «ՆՄԲԿ-ՇՀԱԲՁԲ-14/20-3», «ՆՄԲԿ-ՇՀԱԲՁԲ-14/29-1», «ՆՄԲԿ-ՇՀԱԲՁԲ-14/33-2» և ԱՊ-2014/1 պայմանագրերը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 63.820.000 (վաթսուներեք միլիոն ութ հարյուր քսան

հազար) ՀՀ դրամ և պարտավորվում է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Բողոքի քննության նպատակով 19.06.2017թ. տեղի ունեցած նիստին ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց բողոքն ամբողջությամբ և հայտնեց, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագրով՝ մասնավորապես «ՆՄԲԿ-ՇՀԱԲՁԲ-14/29-1» ծածկագրով պայմանագրով, մատակարարված միայն շարժական ռենտգեն սարքավորումը բավական էր, որպիսի Հանձնաժողովի կողմից բավարար գնահատվեր Ընկերության՝ Հրավերով պահանջվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը, քանի որ նշված ապրանքը հանդիսանում է Հրավերով սահմանված էլեկտրատեխնիկա կամ սարքավորում, ինչպես նաև մատակարարված ապրանքի ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ Ընթացակարգի շրջանակներում յուրաքանչյուր չափաբաժնի համար մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց Ընկերության ներկայացուցչի հիմնավորումներին՝ պատճառաբանելով, որ նշված ապրանքը չի հանդիսանում էլեկտրատեխնիկա, այլ հանդիսանում է բժշկական սարքավորում: Պատվիրատուի ներկայացուցիչը որպես հիմնավորում մեջբերեց ՀՀ ֆինանների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի 1.16 ենթակետը՝ նշելով, որ ռենտգեն սարքավորումը կարող է ձեռք բերվել շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների միջոցով ցանկի նշված տողով, հետևաբար այն չի կարող համարվել որպես նախկինում մատակարաված նմանատիպ ապրանք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 65-րդ կետով սահմանված է, որ.

«Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:»:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Հրավերի 2.3 կետի 1-ին ենթակետի համաձայն «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ

ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում էլեկտրատեխնիկայի և կամ ռադիոտեխնիկայի և կամ կենցաղային սարքավորումների և կամ կապի սարքերի, և կամ սարքավորումների և կամ ռադիոկայանների և կամ վերահաղորդիչների և կամ դրանց օժանդակ մասերի և կամ մինի ԱՀԿ-ների և կամ դրանց ընդլայնման քարտերի և մարտկոցների մատակարարման պայմանագրերը:

Հրավերի 2-րդ մասի «Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի 2.2.3 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն մասնագիտական փոռձառության մասին՝

1) Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է նույն կետի պահանջին բավարարող:

2) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են նույն հրավերով նախատեսված համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող էլեկտրոտեխնիկայի և կամ ռադիոտեխնիկայի և կամ կենցաղային սարքավորումների և կամ կապի սարքերի և կամ սարքավորումների և

կամ ռադիոկայանների և կամ վերահաղորդիչների և կամ դրանց օժանդակ մասերի և կամ մինի ԱՀԿ-ների և կամ դրանց ընդլայնման քարտերի և մարտկոցների մատակարարման պայմանագրերը: Հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

Հրավերի 8.1.4 կետով սահմանվել է, որ հայտերի գնահատումը և հաղթողների որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների/եթե ընթացակարգն ունի մեկից ավելի չափաբաժիններ/:

Խորհուրդն արձանագրում է, որ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը բավարարելու նպատակով հայտով ներկայացված հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրված պայմանագրերի շրջանակներում մատակարարված «շարժական ռենտգեն սարքավորում», «էլեկտրոսրդագրման ապարատ», «հորիզոնական և ուղղահայաց վիրահատական սղոցներ» ապրանքները բժշկական սարքավորումներ են, սակայն Խորհուրդը գտնում է, որ դրանք հանդիսանում են Հրավերով նախատեսված որպես նմանատիպ համարվող էլեկտրատեխնիկաներ, ինչպես նաև գումարային արտահայտությամբ բավարարում են Ընթացակարգի շրջանակներում բողոքարկվող յուրաքանչյուր չափաբաժինի մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսը:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ Պատվիրատուի կողմից վկայակոչված ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացվող գնումների ցանկը, այլ ոչ թե համանման համարվող ապրանքների ցանկը:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1)-ին կետով և Կարգի 69-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մ.Թրեյդլայն» ՍՊԸ-ի 07.06.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել՝ Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 3-րդ, 5-ից 10-րդ, 21-ից 23-րդ, 28-րդ, 40-րդ, 41-րդ, 45-ից 49-րդ, 54-րդ, 55-րդ, 60-ից 62-րդ, 76-րդ, 78-ից 80-րդ, 83-ից 89-րդ, 92-րդ, 94-րդ, 97-րդ, 99-ից 104-րդ, 108-րդ, 109-րդ, 111-ից 113-րդ, 117-րդ, 119-րդ, 127-րդ, 139-րդ, 141-ից 143-րդ, 147-րդ, 156-րդ, 161-րդ, 177-ից 180-րդ, 182-ից 184-րդ, 187-ից 189-րդ, 191-րդ, 192-րդ, 202-ից 206-րդ, 214-ից 226-րդ չափաբաժիններով «Մ.Թրեյդլայն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ